ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Գոհար Սաթունց, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության փորձագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Սեուլ, Հարավային Կորեա, 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 17-ը:

3. Հրավիրող կողմը.

Ասիական Զարգացման Բանկ, e-Asia and Knowledge Partnership Կորեայի Հանրապետության հիմնադրամ (EAKPF) և Կորեայի շրջակա միջավայրի ինստիտուտ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կառուցելով կայուն ապագա. կլիմայական գործողությունների ինտեգրում հարկաբյուջետային և հանրային ֆինանսների կառավարման (PFM) համակարգերին» թեմայով կոնֆերանսին:

5. Քննարկված թեմաները.

1) Ֆիսկալ կայունության վրա կլիմայի փոփոխության ռիսկերի գնահատում,
2) Կլիմայական գործողությունների ինտեգրում հարկաբյուջետային քաղաքականության մեջ,
3) Կլիմայական գործողությունների ուժեղացում հանրային ֆինանսների կառավարման համակարգերում,
4) Կլիմայի հարմարվողականության և մեղմացման ֆինանսավորման ռազմավարություններ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կոնֆերանսը հանդիսացել է գիտելիքի և փորձի փոխանակման հարթակ քաղաքականություն մշակողների, ԱԶԲ զարգացող անդամ երկրների պետական պաշտոնյաների, փորձագետների և պրակտիկ մասնագետների միջև՝ կիսվելու պատկերացումներով, լավագույն փորձով և նորարարական ռազմավարություններով, որոնք կարող են արդյունավետորեն համապատասխանեցնել կլիմայի գործողությունները հարկաբյուջետային և հանրային ֆինանսների կառավարման ռազմավարություններին: Հանդես եմ եկել շնորհանդեսով՝ ներկայացնելով ՀՀ-ում կլիմայի փոփոխության պրոֆիլը, փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները, կլիմայի փոփոխությունից բխող ֆիսկալ ռիսկերի ազդեցությունը մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վրա:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կոնֆերանսի կազմակերպիչների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել փորձի փոխանակման շարունակականությունը, ինչը հնարավորություն կտա կլիմայի փոփոխությունից բխող գործողությունները արդյունավետորեն համապատասխանեցնել հարկաբյուջետային և հանրային ֆինանսների կառավարման ռազմավարություններին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գոհար Սաթունց
21.11.2023